

վերածէին մտաւոր տանջանաց, իւրաքանչիւր պատառին հետ մտածելով մահն ու դատաստանը, եւ աղոնց սարսափին ներքեւ խեղդելով կերակրոյն ախորժը. եւ կամ պատառներուն թուով մէկ մէկ տուն սաղմոս կ'ըսէին, որպէս զի կերակուրը «պարկեշտութեամբ լիցի» եւ իրենք ալ «միշտ անպարապ լիցին աղօթից» (Հրց. 655): Իսկ ո՞վ կրնային լինել աղոնք՝ եթէ ոչ վանականք, որոց կարգէն էր նոյն ինքն տեղեկատուաւ:

Բ. Ձեռք: Յիշեալ կամաւոր բարեպաշտութիւնք չէին կարող կանոն մը կազմել եւ համեմատուիլ պաշտօնական Օրհնութեան հետ, որ ինչպէս այսօր, հին ժամանակ ալ յայտնի ձեւ մ'ունէր: Ե դարուն զայն շատ համառօտ կը գտնենք: Եղիշէի միանձունք ճաշէն յառաջ պարզապէս «փառատրեն զսուրբ Երրորդութիւնն» (215). որ անշուշտ ուրիշ բան չէ՝ բայց եթէ «Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ...» ծանօթ բանաձեւը, զոր «փառատրել» կամ «փառատրութիւն» բառերով կը բացատրեն նոյն ինքն Եղիշէ (96, 215) եւ ուրիշներ: Այս էր ուրեմն ամբողջ աղօթքը: Իսկ յետ ճաշին կը պաշտէին հետեւեալը, քիչ մ'աւելի երկար քան նախորդը. «Փառք քեզ՝ տէր, փառք քեզ՝